

ՄԵՐՈՒՄ ԵՄ ԵՄԵՐՈՒՄ

ԻՆՎԵՍՏԻՄԵՆՏԱՆԻ ՎԵՐԱՅԻՆ ԴՆԵՐ ԵՄԵՐՈՒՄ
մաս երթելի կիսիկերի պէջիւք նիւթիսի, սայիթ
կիսիկեր Բուզնամէսի նէշը օլունաճաղ արը :
Սկիւնիկի բէշն Բուզնամէսի իլէ 150 զբշ.
Աւթը այլըր քեզալ իք 80 »
Իւշ այլըր քեզալ իք 45 »
Մէճմուսնի թանկի 40 վէ Բուզնամէ 20 փրյ.
Տաշ րուար իլ իւն պէճէր նուստունա փոթախանէ
ւճիթի ի ալ ընաճաղը ի սառնիկէն պէյան օլունաճաղ :



Իլանաթըն պէճէր արուար պիւր տէֆալը ք . 2 զբշ.
Իքի տէֆա իլ իւն պէճէր տէֆաւնա . . 2 »
Իւշ տէֆա իլ իւն պէճէր տէֆաւնա . . 1 1/2 »
Իւշ տէֆաւնա զիւտէ օլան , վէ զպիթ ուղտն
Իլանաթ իլ իւն այլըրնա բազարը ք օլունաճաղ :
Տաշ րուարուն կէլն մեթուպ վէ իլանաթըն
բոսթա մետարիթիքի , կէստէրէնիքի իւզերիկն
օլունաճաղ պու մաշալտէ պէյան օլունաճաղ :

ՈՒՄՈՒՐՈՒ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ , ՊԵԼԷՏԻՅԷ , ՎԷ ԻԼՄԻՅԷ

ՎԷ ՄԵՎԱՏԵ ՆԱՓԻԱՅԷ ՍԵՅԻՐԷՅԷ ՄԱՐԹԵԱԼԻԳ ՂԱԶԷՐԱՅԷ

ԱՍԻՐԱՆԷ 12 ՕԳՈՍՏՈՍ

... Խմբագիր .

Իգնատիոս Տէօլլինկէր վերնագրով յօդուած մը ընթերցանք Հռովմայ « Լա Փարիթալէ » Լրագրոյն 262 թիւոյն մէջ որն որ ոչ միայն Տէօլլինկէրի արդիւնքն է անսխալութեան այլանդակութիւնը , այլ և Հռովմէական ոգւոյն , ձիգուիթնեցու և վերջի տիեզերական անուանեալ ժողովոյ ճշգրիտ նկարագիրն ու պարտաւր յինքեան կը պարունակէ : Յօդուածոցս Հայերէն թարգմանութիւնը եւ թէ հաճիք ձեր պատուական Լրագրոյն միջոցան հրատարակել , մեծ շնորհք և մեծ ծառայութիւն մը ըրած պիտի ըլլաք ժողովրդեան մը , որ իւր և աշխարհիս թշնամեաց դէպքերն մեքենաւորութիւնքն լաւ մը տեսնելէն և անոնց մարդութեան վրայ տիրելէն ետեւ , ուրախութեամբ սրտի պիտի տեսնէ նաեւ իր սկզբանց շքեղ յաղթանակը յանձն Տէօլլինկէրի և անոր նմանեաց :

ԻԳՆԱՏԻՈՍ ՏԵՅՈՒԼԻՆԿԷՐ

Ոչ թէ ըստ գիւպաց կը հրատարակեմք այսօր Մոնագրոյի կանոնիկոսին կենդանագիրն (1) ու կենսագրութիւնը , որ յանուն իրաւանց , յառաջդիմութեան և մարդկութեան հակառակեցաւ անդդուելի հաստատութեամբ պապականութեան կայծակներուն , որ մտաց յետին մարդութեամբ մը իշխեց ինքզինքն անսխալ հրատարակել երկրի և երկրից դէմ խիղախելով թերահաւատութեամբ , և մարդկանց վիճերուն վրայ ելել բարձրանալ և կապուել Աստուծոյ ըստողութիւնը : Ընթերցողք արդէն հասկցան մեր միտքը : Նոյն միջոցին որ անդդաւեանականութեան իմաստունները ի Հռովմայ գումարէին իրաւանց և քաղաքականութեան ուրացութիւնը տօնախմբելու և խաւարն ու բռնաւորութիւնը ծափահարելու համար , պատշաճ և իրաւացի էր որ նոյն Հռովմայէն դարձեալ յուղարկուէր ողջոյն մը Տէօլլինկէր կանոնիկոսին , և վկայ ըլլար հրապարակաւ որ Հռովմայ ժողովուրդը այնչափ դարեւ կղերական տիրապետութեան լուծին ներքին ալ միապի գիտցած է վառ պահել ճշմարտութեան ջահը , և թէ

(1) Կատարական Լրագիրը Տէօլլինկէրին կենդանագիրն ալ հրատարակած է մի և նոյն թիւով :

զանի խանգարելու ամենայն ջանք ի զուր եղեր են :

Կը յուսանք որ Հռովմայեցիք մեղի հետ պիտի միաբանին ողջոյն մ' ալ խրկելու առ Տէօլլինկէր այսօր իսկ որ վկայ ըլլայ բոլոր աշխարհի դեմաց թէ կղերականութիւնը ամբողջ ժողովուրդ մը խանգարելու կարողութիւնը չունի : Ասկէ աւելի շքեղ և փառաւոր առիթ մը չկրնար ըլլալ , Եւրոպական « Սանֆէտիզմ » Հռովմէական , ուրեմն Հռովմէական քաղաքականութիւնն ալ թող Եւրոպա երթայ և հրապարակական բողոքով մը դէմ կենայ Պապին անսխալութեանը , որուն այսօր արեւադոյն հակառակորդն է Տէօլլինկէր :

Ազատիկ եմք որ բոլոր քաղաքականացեալ աշխարհքը պիտի դուռնաւ այդ մեծ ցոյցն որ ի չիք պիտի դարձունէ ձիգուիթական ցոյցը :

Երեք դար անցաւ յորմէ հետեւ Մարտիոս Լուտեր օգոստինեան կը բռնաւորը ներողութեան ամօթալի սուրեւառութեան դէմ ելաւ զոր « Թէճիթէ » Լեոն Ժ . Պապէն յուղարկեալ կը տարածէր բոլոր Գերմանիոյ մէջ՝ դրամով վաճառելով մեղաց թողութիւնը , և ինքը Լուտեր յայտնապէս յորդորեց Հռովմայ արքունիքը խափանել եկեղեցական զեղծմունքները : Երեք հարիւր տարուան մէջ խորհրդայ ազատութիւնը կրցաւ ծաւալել Գերմանիոյ մէջ , և ծնալ խումբ մը պատուաւոր մտածողներու այն բարեկարգութեան շնորհիւ որով Եւրոպայի կէսը հիմայ նոր ազանդութեան կը վերաբերի : Նոյն ժամանակէն կրնայ ըսուիլ որ քահանայապետաց տէրութեան բարեւոնական շէնքը կամաց կամաց սկսաւ քայքայիլ :

Պատմագիրք անդիմադրելի տըրամբանութեամբ և անողբելի խրատութեամբ վարուեցան կղերականութեան դէմ որ ֆրիստոսի ճշմարիտ և գեղեցիկ կրօնք փոխեց , կղերականութիւն մը որուն հոգին ձիգուիթութեան կը բաղկանայ : Երեք դար անցաւ շարունակ հակառակութեամբ , այլ Հռովմէ ոչ մասամբ իւրեք գդաւոսացաւ Յիսուսեան ընկերութիւնը որ դատապարտեալ և գրեթէ զլխատեալ էր , և արդէն միանդամ յաճին փոխուած , կաթողիկէ կրօնից մարմնոյն մէջ միեւն մահաւորի պալարի մը պէս կը կենար :

Բայց կարելի էր արդեօք մեռած անուանել այս ընկերութիւնը :

Ո՛չ :

Կապեր անկապ ինչպէս կապեր որդը իր կրօնի միայն մէջ :

Վեր վերցուց նորէն իր գլուխը և տիրապետեց Պիոս Թ . ին վերջի օրերը միւս անդամներէն աւելի :

Իւր երկնած խորհուրդները և չաւանեղ յատակադիծը (բիսո) խիստ զօրաւոր էին :

Ձիգուիթաց վայրկեանական յարութիւնաւեւը բանի տեղ չէր դուռնաւ , բայց անոնք ընդհակառակն փորձ փորձէին հնարքներ կը բնաւէին նորէն բովանդակ աշխարհքը շղթայի զարնելու , խաւար ներողելու , միով բանիւ բոլոր հոգւոյ և թաղաւորաց վրայ տիրապետելու կարողութիւնը ձեռք բերելու :

Այս նպատակիս աշխատող անձանց ամենէն աւելի յանդուինքն նախանձայցոյցներէն մէկը Ռուիթէն անուամբ ձիգուիթ եղաւ , որով և բովանդակ ձիգուիթաց գլուխ ընտրուեցաւ :

Այլ և այլ աշխարհաց հետ դադունի գաղափարութիւններ հաստատուեցան , և շատ մը խորամանկ յօդուածներ որոնք առ երեսու թէ և անմասն և անմեղ կերեպին , բայց ըստ ինքեան սոսկալի հետեւանքներու կառաջնորդէին . ըստ որում երբ նախապատրաստ հարուածը կը հասնէր , ան ատեն ձիգուիթներուն բուն նպատակը կ'այտնուէր : Նոյն օրինակ դաշնադրութիւններ Պապիւրայի , Վիւրդէմպէրի , Պատրիկ , Աստրիոյ և Գաղղիոյ հետ հաստատուեցան : Պատրիկ մէջ , ուր ամենէն առաջ սկսաւ կղերիկ և տէրութեան մէջ բանախուրթիւնը , յայտնի եղաւ , գոնէ մասամբ մը , դաշնակցութեան բուն նպատակը : Ուստի նշանաւորանձանց հակառակ կուսակցութիւն կաղմեով լցան յաղթանակեց և գաշնակցութիւնը խորհրդարանին մէջ նաւակոծեցաւ :

Վիւրդէմպէրի մէջ ձիգուիթները (գեղացիի ձեւով հաղուած) Ամալիա Բաթուպէրատու անուն դերասանուհոյն ձեռքովը գաշնագիրը հաստատել տուին : Բայց յախ ծիրանաւորն գաշնագրութեան վերջին գործառնութիւնը հաստատեց , և իւր գարտիկական աստիճանին անկայել չի սեպեց թագաւորին բանագրեալ սիրուհոյն հետ մի և նոյն կառքի մէջ նստած թագաւորին այցելութեան երթալը :

Վերջապէս երբ որ իրենք զիրենք ապահով վիճակի մը մէջ նկատեցին , այն ատեն մէկդի առին երեսներուն դիմալը , և սկսան յայտ յանդիման առանց աշխարհէ պատկառելու տմարդութեան ճամբուն

մէջ յառաջ քալել : Բայց անպատիւ չի մնացին . իրեն էութիւնը հասկըցուեցաւ : Ժողովուրդը որ արդէն յուղեալ էր , բոլորովին բորբոքեցաւ , որով և այն յիշեալ դաշնագիրը , որ չորս տարիէ ի վեր արքունի հրովարտակաւ զօրացեալ էր , ժողովրդեան խորհրդարանին քննադատութեամբ ենթակայ եղաւ : Օլկա թագուհին իր աներոյն դէմ , պալատականաց վարդապետութեամբ , իրաց վիճակին վրայ տիրացաւ , որով գաշնագրին դէմ եղած հարուածը երկու կողմանէ միաբանելով՝ զայն կործանուելու հարկադրեց : Երեսփոխանաց ժողովն ալ նոյն վախճանին ձեռնառու և զաւ խալիոյ յեղափոխութիւնները , քահանայապետական կառավարութեան գեղեցկագոյն գաւառներուն կորուստը ստիպեց ձիգուիթները ուրիշ մէկ վերջին փորձ մըն ալ փորձելու : Երթալով իմացան Եւրոպայ կայսրուհոյն անկախողութիւնը , և թէ Նափոյժոնն ալ չէր ուղեր կատարել զայն ինչ որ ատենօք ըրեր էր , անոր համար սկսան անոր գահին տակը տկաններ պատրաստել :

Համբաւաւոր Հայրն Պէք (Եռանդուն բնաւորութեան տէր , միանդամայն խորամանկ , խոհեմ և անխրոսով մարդ մը , որ գիտեր տանել ամենայն զրկանաց և անիրաւութեանց , մարդ մը , որ ոչ վատ ձեռնարկութեան մը և ոչ ալ որ և իցէ յանդուին միջոց կերկնէր և որ մեծն է , Աստուծոյ փառացը համար մարդասպանութիւնն իսկ օրինաւոր կ'սեպէր) ինչպէս Ալֆոնս տէ Լիկուորի ալ ձիգուիթաց կրօնին տիրապետական սեւա գահին վրայ ելած էր : Քաղաքական մարդ մըն էր ասիկայ և Աստրիոյ կայսրուհոյն ալ խոստովանալայր . և միանդամայն 10 հազար հոգւոյ հրամանատարութիւնը ստանձեալ էր , որոնք իրեն մէկ ակնարկութեամբ բովանդակ հողադընտոյս վրայ կը շարժէին : Պէք , հասած սեպեց այն վայրկեանը յորմէ կրնար յանդուին հարուած մը տալ ուսումնական աշխարհին դէմ և նոյն իսկ Պապին , Աստուծոյ փոխանորդին ալ , որն որ ձիգուիթաց ձեռքին մէջ կոյր գործի մը եղած էր :

Քանի մը սիւնհոյներ արդէն և զած էին 1860 ին , — 63 ին , — և 63 ին : Եպիսկոպոսունք և յալ և այլ գոյներէ քաղաքական մարդիկը դաւնուեր էին Հռովմայու մէջ :

Բովանդակ Յիսուսեան կրօնքը չան ի գործ դրին Գաղղիոյ մէջ յուղմունք մը յարուցանել տալու , Նաբո

Գալէսնին հէր թարափը լայզըը իւէ մայէնէ խտիւրթտէ, խարիճնտէ վէ թիհքեամաթը խարիճէ մազամընտա օլըազ, իւլ աըըն տէրին հէնտէքի իսթըքեամը վէ տուվարըն տէօրթ էթթափըն ալթը սըընէ հնլիլէք վէ տէրինլքտէ հ

